

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

636

V-61

Բ. ՄԵԽԵՂՎ

ԶՈՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԵԹՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ
ԿՈԼԻՈԶՆԵՐՈՒՄՆԵՐԻ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ Տ

ՅԵՐԵՎԱՆ 1931

28.06.2013

Բ. ՄԵՆՇՈՎ.

636


5-61

ԴԿ

ԶՈՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԵՌՆԵՐԿՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ
ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

1784

Թագավորական



1931

Օ Ե Բ Ե Վ, Ա Ն

15449-57

Ա. Ա. ԽՈՎՈՅԱՆ
Հ. Ա. ԱՅԱՍՏԻՆՅԱՆ

ՊԵՏՈՎԱԾԻ ՏՊԱՐԱՆ
ԳԼԱՎԼԻՏ 6687 (Բ)
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1768
ՊԱՏՎԵՐ № 4078
ՏԻՐԱԺ 5000

I.

Ի՞՞Զ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԶՈՈՏԵԽՆԻՔԱԿԱՆ
ԶԵՐՆԱՐԿՆԵՐԸ ԿՈԼԽՈԶՆԵՐՈՒՄ

Կոլխոզային շարժումը տարեց-տարի ավելի ու ավելի ընդդժկում և մեր Միության գյուղացիական տքնակառությունների մասսաները։ Համկոմկուսի (բ) ԿԿ-ի և ԿՎՀ-ի—զեկումբերյան միացյալ պլենումը պարզեց պարզ նշեց, վոր՝ «Հնգամյա պլանի առաջադրանքները կոլեկտիվացման ասպարհումը վաղուց գերակատարված են»։ Կոլխոզներում, —յեթե հաշվի առնենք կԾՀ Միության բոլոր չքանակներն ու գյուղատնտեսության բոլոր ճյուղերը (հողագործություն, անառնուպահություն, ձկնորսություն, վարսագություն), —առ 10-ն հունիսի 1931 թ. արդեն միացված են 13.839.400 գյուղացիական տնտեսություններ, այսինքն՝ չքավոր միջակ անունությունների 55.9 տոկոսը։ Իսկ հիմնական հացահատիկային չքանակներում կարեկտիվացման տոկոսը բարձրացել է մինչև 80 տոկոս։

Հանրայինացված կաթնատու անասունները մեր կոլխոզներում տարեց-տարի ավելացնում են իրենց համեմատական կշիռը վեցլ Միության տափարի նախընտելք։

1928 թվին մեր Միության բոլոր անասունների հար-

մեմառությամբ նրանք կազմում էին 0,4%-ը, 1929 թվին՝ 0,8%-ը և 1930 թվին՝ 6,6% : Այս տուաջադիմությունն անասունների կողեկալվացման առաջարիգում, անասնապահական խոշոր խորհանակների կազմակերպման հետ միասին, հաստատ գրավական և հանդիսանում անասնապահական ոլորտի արագ լուծմանը մեջանում :

Գյուղում տեղի ունի սոցիալիստական անտեսության հոկանապահությունն, աշխատանքի ու կենցաղի նոր ձեռքի կազմակերպման հետ միասին : Անցած չքշանում ունենք արդեն ահաղին նվաճումներ : Տանյակ հաղարավոր խոշոր կոլխոզներ, տեխնիկայի վերջին խոսքի համաձայն կառուցյլոծ իրենց նոր չենք բռով ու հարցուր հազարավոր գլուխ անասուններով զարդարում են մեր Միությունը : Սոցիալիստական կուլտուրայի այդ բոլոր բջիջներում յնուում ե տենչույին աշխատանք, կուլտուրի սկզբունքներ բարենկու : Համար աշխատանքի կազմակերպման գործում և կոլխոզներում կաթնատու անասունների խնամքելու, կերակրելու ու պահելու գործը կանոնավոր հիմքերի վրա գնելու խնդրում :

Կուսակցական կենտրոնական մարմինների և մեր կուսակարության վերջին վորոշումների համաձայն կոլխոզային անասնապահության բարձրացումն ու զարգացումն հանդիսանում է բոլոր կազմակերպությունների ու հիմնարկությունների հիմնական խնդիրներից մեկը :

«Յուրաքանչյուր կոլխոզի նվաճումն անասնապահության առաջարիգում հանդիսանում է իրեւ համովիչ ալաջույց, վոր միայն խոշոր կոլեկտիվ անասնապահությունը կարող է հանել մեր ամբողջ անասնապահության առաջարիգում» :

Քյունքն այն խղճալի գրությունից, վոր ստեղծվել եր կապիտալիստական արտադրության պայմաններում անջատ, փոշիացած, անհատական տնտեսության չնորդվել :

Կոլխոզային անասնապահությունն իր քանակական զարգացման ներկա ետապում կարիք ե զգում մի ամբողջ շարք ձեռնարկումների, վորոնց նպատակը պիտի լինի բարձրացնել կոլխոզների հոտերի վրակային կազմը :

Կոլխոզային կագրերը կարիք են զգում ձեռք բերելու տեխնիկական զիտելիքներ կուլտուրական անասնապահության ասպարիզում :

Այդ ինտերների բարձրացման համար պետք է կազմակերպել զոտեխնիկական ձեռնարկումների մի ամբողջ սիստեմ, վորը պետք ե անցկացնել ինչպես հենց իրենց՝ կոլխոզների ներսում, այնպես ել նրանց շուրջը :

Զոտեխնիկական ձեռնարկումների այն սիստեմը, (ոսցիոնալ կերակրումը, կաթնատության մրցումը (կոնկուրս), ցուցահանդեսները, ցուցադրումները) վոր գոյություն ե ունեցել մինչ մասսայական կոլխոզային շարժման ծավալման շրջանը, պետք ե հիմնովին վերանայիլի ու վերափոխվի :

Զոտեխնիկական բոլոր ձեռնարկությունների հիմքում պետք ե զնել սոցիալիստական մրցման ու հարվածայնության մեթոդը :

Զոտեխնիկական ձեռնարկումներն անցկացնելու աշխատանքի հիմնական մեթոդը պիտի հանդիսանալ փորձի և սոցմրցման ու հարվածայնության արդյունքների ընդհանրացումը կոլխոզային անասնապահության առաջարիգում» :

Հության կառուցման ասպարիզում ու նբանց վոխտ-
դրումը մյուս կոլխոզների մասսայի մեջ :

Յուրաքանչյուր կոլխոզի խնդիրն և հանդիսանում
կարեատու և մասցու անասունների կանոնավոր սպա-
գարծումը, երանցից բոլոր հնարավոր ոգաւոններն սու-
սալի ու հասցնելն ամենաբարձր արտադրողականու-
թյան :

Կոլխոզներում վորքան լայն դրված լինի զոռտեխ-
նիկական աշխատանքը, վորքան լավ զինված լինեն կոլ-
խոզնիկներն անասուններն լավ խնամելու ու պահելու-
համար անհրաժեշտ գիտելիքներով, այնքան հեշտ կը-
լինի այդ խնդրի իրազուծումը :

Զոտտեխնիկական ձեռնարկումները կոլխոզներում
պետք ուղղված էին կարեատու անասունների արտա-
դրականության ու մասցու անասունների մասին
ետակութունների բարելավման նպատակին, անասուն-
ների սեմլառության արենդատ խվացման, էինդակրելու
ու պահելու կանոնավոր տեխնիկա մոցնելու և ամեն-
առարի խելացի կերպով հոտը զտելու ու բրակ խոտանե-
ները հոտից ջոկելը կիրառելու հիմունքներուլ :

Իրենց խնդիրներով ու բովանդակությամբ զոտտեխ-
նիկական ձեռարկումները բաժանվում են յերկու մասի,
դրանցից մի մասի կիրառման տեղը կոլխոզի հոտերն են,
նրա ամբողջ անասնապահական ճյուղը, իսկ մյուսները
պործադրվում են կոլխոզից գուրս, նրա շուրջը, նպատ-
ակ դնելով կոլխոզների արտադրակոն նվաճումների
ժողովրդականացումը :

Կոլխոզները հանդիսանում են ամենալավ բուժա-
րանները զոտտեխնիկական գիտելիքների համար (գոտ-

զուլտուբայի) : Կոլխոզային զոռտեխնիկական ձեռնար-
կումների մեջ, բացի հիմնական նպատակից—անասուն-
ների վորակային բարելավումից,—պետք և մտնի կոլ-
խոզային մասսաների արտադրական ստեղծագործ
նախաձեռնության բարձրացումն անտառնապահու-
թյան խնդիրների լուծման գործում և գործնական ու-
նակությունների կազմակերպումն հետագա աշխատանք-
ները խորացնելու համար: Զոռտեխնիկական ձեռնար-
կումները պիտի գրավեն կոլխոզնիկների ուշադրու-
թյունն անասնապահության հիմնական խնդիրների վրա
և աջակցեն սոցիալիստական մրցման ու հարվածայնու-
թյան լայն զարգացման անասնանոցում՝ դոմում, վոչ-
խարանոցում, թունանոցում, կոլեկտիվային խողանօ-
ցում և այլն:

Զոռտեխնիկական ձեռնարկումները կոլխոզից գուրս
(կոլխոզների շուրջը) պետք և հաստատեն արտադրական
ամուռ էապ կոլխոզների միջև, մշտական իրավանակումն
անասնապահության կազմակերպման ու տեխնիկայի
մեջ ձեռք բերված փորձառության ու հմտություն:
Երանք պիտի բարձրացնեն կոլխոզների արտադրական
և նուռագիազմն անասնապահական հիմնական պրոբլեմ-
ների հաջող լուծման համար (անասունների քանակի
մեծացումն ու վորակի բարձրացումը, կոնտրակտացիան
և այլն): Կոլխոզների շուրջը գործադրվող զոտտեխնի-
կական ձեռնարկումների հիմնական խնդիրներից մեկը
պիտի լինի շրջանի բոլոր կոլխոզների մասսաները
ներքրավիլ սոցիալիստական մրցման ու հարվածայնու-
թյան:

Սոցիալիստական մրցումը չպիտի սահմանափակվի

միայն անասնանոցի (ամբողջապես վերցրած), խոզանոցի և այլն մրցումով, այլ ավելի առաջ պիտի գնտ, բնդղրկելով ինչպես անասուններին խնամող աշխատավորների առանձին խմբերին, այնպես էլ առանձին աշխատավորներին:

Մեր հետագա բացառության մեջ ամեն մի առանձին գեղքում մենք կոնկրետ ինքաղով կը լորունու յուրաքանչյուր ձեռնարկման խնդիրներն ու նպատակը:

Զոտաեինիկական ձեռնարկումներն, ինչպես մենք արդեն նշեցինք, բաժանվում են յերկու խմբի՝ ա) ձեռնարկումներ կոլխոզում և բ) ձեռարկումներ կոլխոզից դուրս (շուրջը):

Կոլխոզի ներսում գործադրվելիք զոտաեինիկական ձեռնարկումների մեջ մտնում են հետեւյալները՝

ա) Արտադրող ցուլերի ճիշտ ընարությունը՝

բ) Հոտի գտման կիրառումը:

գ) Մատղաշ անասունների ներկոլխոզային կոնտրակտացիա:

դ) Մատղաշ անասունների փոխանակումն կոլխոզի և անհատականի ու քաղաքի դնակչության միջել:

յի) Բեղմնակայանների և արհեստական բեղմնավորման կողմանակերպումն:

զ) Կոնկուրս անասնային աշխատավորների միջել, մատղաշ անասունները մեծացնելու խնդրում:

ԿԱԹՆԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆԵՐԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

ա) Բացինալ կերակրման կարգակերպումն:

բ) Մրցման կազմակերպումն աշխատավորների միշել, կովերին կերակրելու ասպարիզում:

ԿԱԹՆԱՏՈՒ ԱՆԱՍՈՒՆԵՐԻՆ ԽՆԱՄԱՑԱՐՈՒՄ ԹՅԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

ա) Կոնկուրս կովը լավ կթելու համար:

բ) Կոնկուրս կուրծի լավագույն խնամքի համար:

գ) Կոնկուրս անասուններին կանոնավոր մաքրելու համար:

դ) Կոնկուրս աշխատավորների խմբերի միջել չենքը չավ խնամելու համար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՂՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

ա) Հարվածային բրդաղների կազմակերպումն և աշխատանքի հաշվառումն:

Զոտաեինիկական ձեռնարկումները կոլտնտեսությունից գուրս իրենց մեջ ամփոփում են հետեւյալ առանձին մասերը՝

ԶՈՈՑԵԽՆԻԿԱԿԱՆ—ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԽՈՐԱՑՆՈՂ ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Կոնկուրս-մրցումներ Մշանի կոլխոզների միջել՝

ա) Կոնկուրս անասունների լավագույն արդյունա-ավության համար:

բ) Կոնկուրս լավագույն անտօնանոցի (գոմի, փառակի, թռչնանոցի և այլն) համար:

գ) Կոնկուրս անասունների խնամատարության լա-վագույն կազմակերպման համար:

դ) Կոնկուրս անասուններին հյութալի կերով բավագույն կերով ապահովելու համար :

յԵ) Կոնկուրս մատղաշ անասուններին լույսաղույթ կերպով մեծացնելու համար :

զ) Կոնկուրս արտադրանքի վարակի համար :

ե) Փորձառության փոխաղարձ փոխանակումի կուլտուրների միջնորդ:

ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑՈՒՅՑ ՏՎՈՒՅՑ ՏՎՈՂ ԶԵՐՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ա) Ցուցահանդեսներ կոլխոզային անասնապահության արդյունքների :

բ) Ստուգատեսներ ու կամպանիաներ անասնապահության առանձին խնդիրների վերաբերյալ (անասնանոցների կառուցումն, սիլոսային աշտարակների կառուցումն, անասնապահության ամսորյակ և այլն) :

Առանձին ձեռնարկումների ընտրությունը կատարվում է հաշվի առնելով յուրաքանչյուր առանձին կոլխոզի արտադրական հանդամանքները նույնական և շրջանի կուեկտիվ անասնապահության հերթական խնդիրներն ու պահանջները: Հակառակ դեպքում այս կամ այն ձեռնարկման կիրառումը՝ չի տա դպասի եֆեկտ և չի ոգնի կոլխոզի արտադրությանը:

Այս կամ այն ձեռնարկումներն ընտրելիս, պետք է զեկավարվել վո՛չ միայն այն արտադրական ներ տեղեւրի նկատառումով, վոր գոյությունը ունին մի շարք կուլտուրներում, (կանոնավոր կերակրման բացակայությունն, անկանոն կիթը, կոլխոզիկի անծանոթությունը

անասուններին խնամելու յեղանակին և այլն), այլ բացի արանցից, ուշադրության պետք է տանել նաև կոլխոզային անասնապահության հերթական խնդիրները: Պետք է կոլխոզների ամբողջ մասսային ներգրավել ստեղծագործ ու նախաձեռնող աշխատանքի՝ խոչոր տնտեսություն ստեղծելու և հոտի վորակը բարելավելու և քանակը մեծացնելու համար:

Բնդ սմին անհրաժեշտ է ինկատի ունենալ, վեր ձեռնարկումները զործադրելիս հսկայական առավելություններ ունի նրանց կիրառման կոմպլեկսային մեքությունը:

Կոմպլեկսային մեթոդը կայանում է նրանում, վոր գոտի խնիկական ձեռնարկումներն ընտրվում են այնպիս, վոր կոլխոզների կարողանա գիտելիքներ ու փորձառություններ անունով բերել, պայքարելով քերությունների գեն ամբազապես վերցրած: Յերբ որինակ կոլխոզում անբավարար է գրված անասունների կերակրումն ու նրանց խնամքն, ապա քիչ կլինի մենամիայն կանոնավոր կերակրում կարգավորելը, պետք է կազմակերպել և անասունների կանոնավոր խնամասարությունը կերի հայթայթումը, կիթը և այլն: Յեթե այս դեպքում մենք սահմանակալիկինք միայն կանոնավոր կերակրում կիրառելով, ապա ստացված ամբողջ արդյունքը կփչանար անասունների խնամասարության սխալ ձեվերի հետեւավանքով: Սա թե ինչու զոտեխնիկական ձեռնարկումների ցանկ կազմելիս պետք է հաշվի առնել նրանց կիրառման կոմպլեկսային մեթոդը և ամեն միջոց ձեռք առնել, վորպեսզի անցկացնել այն ամբողջապես:

Բնդ սմին կոլխոզների վարչությունները պետք են

ԶՈՌԵԽՆԻԿԱՎԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿՈԼԽՈՇԻ
ՆԵՐՍՈՒՄ

ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԱՑՈՒՆՆԵՐԸ ԲՈՒԺԵ-
ԼՈՒ ԱՍՊԱՐԻՉՈՒՄ:

աշխատեն ի նկատի առնված զոռտեխնիկական ձեռնար-
կումների ցանկը կազմելուն մասնակից դարձնել բոլոր
կոլխոզնիկներին :

Կոմպլեկսային մեթոդը սոցիալիստական մրցման ու
չարշաժայնության լայն ծավալման հետ միասին կոլ-
խոզնիկների շրջանում, —տալիս է արտադրական լավա-
գույն արդյունք :

Զոռտեխնիկական միջոցառումներ կիրառելիս պետք
է ոգտագործել շրջանի բոլոր կուլտուրական ուժերը՝
բոլոր արտադրական գիտական միավորները (սովորդ-
ուերը, տոհմային տնտեսությունները), փորձնական
կայանները և այլն :

Կոլխոզներին աջակցելու համար շրջանի գոյություն-
ունեցող զոռտեխնիկական ձեռնարկումների սիստեմում
դուրձնական կայանների ու սովորդերի դերը պիտի կա-
յանա կոլխոզներին մշտական կազմակերպչական ու ար-
տադրական աջակցություն ցույց տալու մեջ անասնա-
ռահական ինդիքներում։ Կայանները պարբերաբար
ովհետի ծանոթացնեն կոլխոզնիկների մասսաներին դե-
տության ու տեխնիկայի վերջին նվաճումներին, վոր
ձեռք ե բերվել կոլեկտիվ կաթնային անասնապահու-
թյան ասպարիգում։

Արտադրող-ցուլերի ընտրությունը։ Ամենքին քաջ
հայտնի յե, վոր արտադրող ցուլը նախընի մեջ տաղին
գեր ե խաղում, Յուլի կանոնավոր ու անսխալ ընտրու-
թյունից ե կախված անասնաբուծական տջաստանքների
հաջողությունը կոլխոզում։ Բավական ե նախընի մեջ
ընկնի մի վատ արտադրող, կոլխոզի անասնաբուծու-
թյունը խոկույն կակսի վատանալ։ Յեթե մի վատ կովը
նախընի մեջ տալիս է տարին մի վատ հոբթ, ապա վատ
արտադրողը տարվա ընթացքում կտա 70-80 վատ հոբ-
թեր։ Այսուղից պետք է հետեցնել, վոր արտադրող
ցուլի ընտրությանը շատ զգուշ պետք է վերտիքավել։

Անասնաբուծության պրակտիկայի մեջ հաստատ-
ված ե, վոր արտադրող-ցուլերի մի մասն ընդունակ ե
տալու այնպիսի առջիկներ, վորոնք իրենց արդյունա-
տվությամբ ավելի բարձր են, քան իրենց ծայրերը, ցու-
լերի մի ուրիշ խումբ տալիս ե առջիկներ ավելի ցածր
կիթով, քան իրենց մայրերը։

Այսպիսով պարզվել ե, վոր արտադրող-ցուլերի մեջ
կան վատացնողներ, վորոնք տալիս են ցածր արդյու-
նատու սերունդ, և լավացնողներ, վորոնք տալիս են
լավ, բարձրակիթ սերունդ։

Արտադրող-ցուլերը աղջում են ինչու կաթի ար-

գյունավետության վրա, այնողես և ճարպի քանակի վրա:

Կաղմարկերպիչ-կենդանաբույծը պիտի ստուգի արտադրողին ու վրոշչի՝ լավացնող և նա թե՛ վատացնող:

Դրա համար պետք է չըջանի զոտեխնիկական մասնագետների, կամ մերձակա փորձնական կայանի հետ միասին, աշխատավորության ու կարողության մեջ անառողջ տուիլը:

Կառկած չկա, վոր անրավարար ուշադրությունը դեպի արտադրող-ցուլերի ընտրության ինդիքը մեծ վնասներ կրների մեր անառողջության ու կարողության մեր անառողջների արդյունավորթյան գարուացումը:

Վահացնող-ցուլերը տարածվելով մեր նախիրներում, ճնշել կերպով կազմեն նախրի կովերի կաթնարդյունավետության զարդացման վրա, կուտակելով սերընդի մեջ ցածր կաթնատվության հակումն: Դժբախտությունն ավելի կիրանա, յեթե անդիտորներ ուղղի ունենա աղջակցական բուծում, այսինքն յեթե աղջիկնորթերին ծածկում են (բեղմնավորում) իրենց վատացնող հայրերը:

Վերջին ժամանակներու մեր անառողջութական փորձնական կայանների աշխատանքով հայտնաբերված են մի քանի տեղերում պարզապես վատացնող ու լավացնող ցուլեր: Այսպես՝ Մոսկվայի ճարպային փորձնական կայանի յարուպավայրան նախրում ճանաչված ե իրեւէ լավացնող «Բումին» ցուլը, «Շուլյունո» սովորողի (Մոսկվայի ճարպավայր) չվեյցարական ցեղի հոռոմ-«Արքա» (Կորոյլ) ցուլը և այլն:

Լավացնող ցուլերը հանդիսանում են աղնվացեղ

մեծ արժեքներ: և նրանց պետք է ոգտագործել լիազես իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Արտադրող-ցուլին չի կարելի գնահատել միայն նրա մոր կիթով: Մոր արդյունատվությամբ չի կարելի յեղակացություն հանել լավացնող կամ վատացնող համակությունների մասին: Անհրաժեշտ ե հետախուզել նրա ամբողջ սերնդի արդյունատվությունը և այն ժամանակ միայն հանել այս կամ այն յեղակացությունը:

Այսուհետո, որինակ, հետպինսկի գյուղատնտեսական տեխնիկումի նախրի յարուսավյան ցեղի մեջ հայտնաբերված ե «Բույակ» ցուլը, վորը չնայելով, վոր ինքը սերված ե բարձր արդյունատու մորից, իր սերնդում ավելց ցածր արդյունատու աղջիկներ:

Ցուլեր ընտրելիս անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել առողջությանը, ամբուքյանը և կազմվածքի կաթնաւալուրությանը: Նախրի հիմնական արտադրությունը ե սերված լինի կաթնառատ մորից, վորի տարեկան կիթը բարձր լինի ընդհանուր հոտի միջն կիթից 25-30 ու ավելի տոկոսով: Ցուլից պահանջվում է, վոր նա ընդունակ լինի իր ցեղական տվյալերը կայուն կերպով փոխանցելու իր սերնդին:

Շըջանային գոտոտեխնիկական տչիսատանքների մեջ պիտի մտնի կոլխոզային նախիրների համար արտադրող ցուլերի ընտրությունը, նրանց հատկությունների սոուգումը: Արտադրող ցուլերի սոուգումը կարելի յեկատարել վո՛չ բալոր կոլխոզներում, վորովհետեւ այդ աշխատանքը կավացած է վորոշ ծախքերի հետ և պահանջում է մշտական հոկողություն:

Բավական ե սկզբներում սահմանափակել ար-

առաջըսով ցուլերի ստուդումը կատարելով մի յերկու շերեք կոլլեգներում, վրանք ունեն լավ արդյունատվությամբ ոժտված խոշոր նախիրներ:

Ստուգած բոլոր լավացնող ցուլերին կարելի յետարածել շրջակա կոլլեգներում:

Յէթե չը տանում կա փորձնական՝ կայան, կամ սոհմական խորհրդային անտեսություն, ասլա ցուլերի ստուգման դուքը նրանք պիտի վերցնեն իրենց վրա, քանի վոր նրանք ունեն իրենց արագադրության տակ հատուկ՝ զոտեխնիկական անձնակազմ ու սոուզման այլ հարմարություններ:


Արտավրող-ցուլերի ստուգումը սպորտար սկսում էն նրանց ամենավաղ հասակից, այն հաշվառումով, վոր նրանց ցեղական ուժը վորոշելու մոմենտին (իսկ զա դուգադիմում և 5-ամյա հասակին) արտավրող-ցուլերը կորցրած ըլինեն, ցեղական ծառայություն մատուցելու կարողությունները: Ցուլերին փորձելիս անհրաժեշտ է կոլլեգներում բացատրական աշխատանք ունել արտավրող-ցուլերին նախիրներում ողտագործման ժամանակամիջոցն յերկարացնելու խնդըլի մասին, նրանց լավ խնամելու, կանոնավոր (չափավոր) կերակրելու ու ամենաբար մարզանքների միջոցով (ժամանակամիջոցներ, ոգտագործելով ցուլին ամեն ուշաւել թեթեկ բեռնատար աշխատանքի մեջ և այլն):

Չափազանց առատ կերը և անշարժությունը նպաստում է ցուլի ավելորդ գերացմանը և վաղահաս ծերության և ուրեմն անպետքանալու պատճառ են զառնում: Ուրեմն պետք է խուսափել դրանից և ցուլը պահանջաներու մեջ և այլն:

Այս ամենն ավելացնում են արտադրողի ծառայության ժամանակամիջոցը: Սովորաբար ընդունված է կարծես, թե ցուլը նախրի մեջ կարող է ծառայել մինչև 4-5 տարեկան հասակը: Մեր նպատակադրամը պիտի մինի յերկարացնել նրա ծառայության ժամկետը մինչև 10-12 տարին: Ստուգած լավացնող ցուլը հանդիսանում է իրերել մեծ արժեք չամար, ուստի ամեն միջոց պետք է ձեռք առնել, վորակեսի նրա ծառայությունը մարդկան կետը յերկարացնենք ու պահպանենք նրա պիտանիությունը յերկար ժամանակով:

Սովորաբար ցուլերի ստուգումն կատարում է Մսկ-վայի մարդույին փորձնական կայանի մշտկած սխմայով (ծրագրով), վար բերում ենք ստորև:

Ցուլը ստուգելու համար ջոկում են 25 կով ու զուգավորում ցուլի հետ: Ծնված բոլոր հորթերը մեծացնում են ու հետագայում, նրանց հատկությունները համաձայն ել վորոշում և արտադրողի ժառանդական հատկությունները: Ցուլը ստուգման և յենթարկվում մի տարի յերեք ամսականից մինչև մի տարի վեց ամսական հասակում: Ստուգման համար ինչպես ասված և վերել, ցուլեր վերցնում են բարձրորակ, արդյունավետ, լավագույն մայրերից: Ստուգման ժամանակ նրանք ոգտագործվում են իրենց նախրի մեջ իրենց յերկրորդական արտադրողները, յեթե հոտի մեջ կա հենական արտադրող-ցուլ: Յերբեմն ել, յերբ ստուգման յենթարկվող այդ ցուլերը պատճառ են զառնում չափազանց մեծ հավելյալ ծախքերի, կամ այլ միավորումներին ոգտագործություն ունեն ստուգման ժամկետն անցնելը: Այսօքանին մարդուն հիմքություն անհրաժեշտ է նիմացը առաջըսում:



Ժեշտ է մշտական հսկողություն սահմանել նրանց պահելու վրա։ Հակառակ դեպքում կարող ե պատահել, վոր արտադրողի բարձր արժանիքները վորոշելու մոմենտին (4-5 տարեկան ժամանակ), ցույն արգեն անպետքացած լինի տոհմական ծառայություն մատուցելու համար։

Ցուլերի սոսուզման միջոցին անհրաժեշտ է նրանց կերակրելու մշտական ցուցակագրում կատարել, ինչպես և նրանց ստացված սերնդի կերակրմանը, սկսած նրանց կյանքի առաջին որերից մինչև ցուլի դնահաման որը։ Ցուլի աղջիկների կիթը պետք է ցուցակադրել ամեն որ։

Յեթե կիթն ամենորյա ցուցակադրելը չափ ծանրաբնություն թիւ, կարելի յէ արդ կատարել 10 որը մի անգամ։ Կիթը 10 որը մի անգամ ցուցակադրելը կուռզ և սխալմունք առաջնել դեպի լավը կամ վատը 1,5%-ով։ Արտասահմանյան խորհնական կայտներից շատերն ու տոհմական տնտեսություններն անցնում են արդյունատվության արդարության պարբերական ցուցակադրման։

Ցուլից յերկու ծին ունցող 10 կովեր ստանալուց հետո, կարելի յէ արդեն դատել արտադրող-ցուլի հառկությունների մասին, նրա աղջիկների արգյունատվությունը համեմատելով իրենց մայրերի արդյունատվության հետ, ուղղումներ անելով հասակի ու կերակրման նկատմամբ։

Յարասարդական անասունների համար հասատակած ե, վոր ցուլի մասին կարելի յէ դատել ինչպես լավացնու-

ղի, յիթե աղջիկների ու մայրերի կիթի տարբերությունը կազմում է՝

1) 25 զույգ (25 մայր + 25 աղջիկ) մայրերի ու աղջիկների միջնակ գույն պահան 450 կիլ. կաթից։

2) 10 զույգ մայրերի ու աղջիկների միջնակ գույն 700 կիլոգրամից։

3) 5 զույգ մայրերի ու աղջիկների մեջ վոչ պահան 1000 կիլոգրամից։

Տարբերությունը չի է լինելու գեոգրամ ցուլերը կատարելի ուղիղ և համարել և նրանցից մի քանիսը միաժամկետ կարող են բավացնող լինել։

Հույս չգնելով միայն արտադրող-ցուլերի ստուգման վրա, անհրաժեշտ է ձեռնարկել մեր կոլյուզներում աշխատած ու աշխատող արտադրող ցուլերի մասսայան հետազոտմանը։ Այս բանը կարելի յէ կատարել այսանդ, ուր կան բավականաշափ նյութեր մայրերի ու աղջիկների արդյունատվության մասին, միաժամանակ նրանց պահելու, կերակրելու ու խնամելու պայմանների բնույթը վորոշող տվյալներ։

Հայրաբերված բոլոր արտադրող ցուլերին, վորոնք ավշացներ ունեն իրենց մեջ կոլյուզային նախիրը լավացնելու, անհրաժեշտ է լիազես ոգտագործել հոգ տանելով, վոր նրանք վորքան կարելի յէ յերկար պահպանեն իրենց տոհմիկ ծառայության ընդունակությունները։ Սովորաբար լավացնող ցուլերն ոգտագործվում են մայրական լավագույն ժամաներին՝ ըեկորդիստկաների վրա։ Չե՞ վոր ամենքին լավ հայտնի պիտի լինի, վոր ըեկորդիստկաներին՝ այսինքն բարձր կաթնատուկովերին միջակ հատկության արևորությունը կուգա-

վորելը նպատակահարմար չեւ : Յեթե աղջալ կոլխոզում կա լավագույն ցուլ, իսկ լավ կաթնառու կովեր չկամ, ազա աւելիք լավ և ամբողջ շրջանի անասնաբուծությունը լուրջներու համար այդ լավացնող ցուլին բեռնավորել ուրիշ՝ հարեվան կոլխոզների բեկորդիստկաներով :

Երջանի կոլխոզներում ցուլերի ստուդիան խորացած աշխատանք տանելու հետ միաժամանակ, անհրաժեշտ է մասսայական աշխատանք տանել կոլխոզների նախիրների մեջ մայրական կազմ ջոկելու ուղղությամբ, վորպեսզի կարելի լինի ցուլերին ողտափորձել միմիայն բեկորդիստկաների ու բարձր կաթնառու կովերի համար :

Ցուլերի ստուգումը հանդիսանում է շատ արժեքավոր ու անիրաժեշտ ձեռնարկում մեր կոլխոզների անասնաբուծության մեջ : Դա հնարավորություն է տալիս միանդամայն գիտակցորեն ու հաստատուն կերպով ղեկավարել կաթնառու անասունների ընտրությունն ու բուծումը :

Նախիրի գտումը խոտաններից, այսինքն անպետքների ջոկելն ու նախիրի միջից դուրս հանելը, շատ լուրջ ու կարևոր մոմենտ է կոլխոզային անասնապահության կանոնավոր կազմակերպման գործում : Առվորաբար մեր կոլխոզներում իր ժամանակին չի կատարվում նախիրի գտումը խոտաններից, վորի հետեանքով նախիրների մեջ ձմեռային շրջանում, յերբ կենդանու պահելը թանգ է նատում, հաճախ մնում են սակալ արդյունաբեր կամ միանդամայն անարդյունաբեր անասուններ, վորոնք առվելացնում են անողուած ծախքերն ու բարձրացնում արտօնանքի ինքնարժեքը :

Ամեն մի կոլխոզ պետք է կիրանի խոտաններից գըտավուն, իր ժամանակին ու ամեն տարի :

Նախիրի խոտանների զոման ամենալավ ժամանակն աշունն է : Խոտանների այդ գորումը կատարելով աշնանը, մենք ձմբան շրջանի համար կազմում ենք մի նախիր՝ բաղկացած մեայն արդյունատու անասուններից : Զըտված անասուններին պետք է լուծարքի յինթարկել մինչև նախիրը ներսը կապելու շրջանը :

Ներկա մամենտին, յերբ կոլխոզային անասնաբուծության առաջ կանգնած են քանակն ավելացնելու ու վորակը բարեկավելու լուրջ ու կարեոր խնդիրներ, զըտումը խոտաններից պետք է կատարել մեծ շրջահայեցությամբ ու զգուշությամբ, վորպեսզի չստեղծվեն այնպիսի պայմաններ, վոր կարող են կասեցնել կոլխոզային հոտերի աճումը :

Ինչպես կանոն պետք է ընդունել, վոր զոման ժամանակ պետք է ջոկել միմիայն բացարձակապես վնասաբեր ու անպետք անասուններին (հայտնապես այլանդակ ու պակասավոր մատղաշներին), ատամներն ամբողջապես թափանց պառակ կուներին . կրծի խրոնիքական հեղանդություն ունեցողներին, քիչ կաթ տվողներին և այլն :

Խոտանների գորումն անհրաժեշտ է կատարել անասնաբուծական ու ազգունումիսկան անձնակազմի մասնակցությամբ անպայման կազմելով մանրամասն արձանագրություն : Արձանագրության մեջ տրվում է կենդանու լիակատար նկարագիրը՝ անունը, գույնը, հասակը, ծաղումը, համարն ըստ հոսքի և զուրքագրքի, —կենդանու գնահատումն ու խոտանման պատճառների և անբանման թվարկումը :

Այսպես են կատարում անպետք անասունների տըն-ահսավարի գոտումը : Սակայն այս գեռ քիչ է : Կանոնավոր զոտեխնիկական աշխատանքի զարդացման համար պետք է կոլխոզի նախորի մեջ կառարել անասունների ընտրություն, գլխավորուստի մասնաշներից տոհմուկան նպատակների համար : Մատղաշ անասունների ընտրությունն ու խոտանումը կատարում են 5-6 ամսական հասակուժ : Տնիմի համար սովորաբար քողմում են կարևորագույք ծնված ցուլիկներին : Միջակ կաթնաւու կովերից ծնված դուլիկներին առաջի համար չեն թողնում : Ցուլիկները, բացի բարձր կաթնաւու ծագումից պիտի ունենան նաև կանոնավոր կաղմածք, առանց բացահայտ պահասությունների (մեջքի կորություն, կմախքի թուլություն և այլն), լավ դաշտացած սեռական գործարաններ և այլն :

Հորթերը սովորաբար խոտանում են միայն այն ժամանակ, յերբ ունեն բացահայտ այլանդակության համանող պահասություններ, կամ գտնվում են ծայրահեղ հիվանդություն մեջ : Միանդամայն առողջ, սակայն ավելորդ վորձ հորթերը ըրջանային կոլխոզմիության միջոցով տրվում են ուրիշ կոլխոզների : Տոհմի համար թողնվում են այնքան վորձ հորթեր, վորոնք նշված են կոլխոզի պլանով :

Հստ ծագումի հորթերին չպետք է խիստ խոտանման յենթարկել, վորովհետեւ նրանց ծնողների արդյունավետությունը լիապես չեր կարող արտահայտվել անկանոն կերակրման, վաստ պահելու և ինամելու հետեւանքով : Յեթե կոլխոզի նախորի մեջ անասունների կաթնատղությունը բավարար չափով հայտնաբերված և նախորիթաց զոտեխնիկական աշխատանքի ու կանոնա-

վոր կերակրելու հետեւանքով, ապա կարելի յէ դեկամերդիկ մեջ այսպիսի կողիտ կանոնով : Տոհմի համար հոտի մեջ կարելի յէ թողնել այն հորթերին, վորոնց ժայրերը նախորի միջին կիթից 20-25 % ավելի յեն տառիւս : Յեթե, որինակ, միջակ կովը տալիս է տարեկան 2000 կիրագըր կաթ, ապա ցեղի համար պետք է թողնել տարեկան 2400-2500 կիլու ավելի կաթ տվող կովերի հորթերը :

Մենք այսուեղ առանձնապես շեշտում ենք անասունների կանոնավոր կերակրելու և պահելու պայմանները, նրանց կիթն ավելացնելու համար :

Մեզ վիճակվել և վորձով համոզվել, վոր չառ անդամ նույնիսկ ուստական տոսկանկան (հյուծված, թերապարզացած կով), վոր չառ քիչ իսկ տալիս գյուղացիական-անհատական տնտեսության պայմաններում՝ իր վաստ ու նվազ կերակրման չնորհիվ, կոլխոզային նախորի մեջ տաք գոմում, հյութալի և ուժեղ կերպվ, — կանոնավոր կերակրելով, կարողացել և գրեթե կրկնապատկել իր արդյունավետությունը : Ահա թե ինչու լավ մատղաներն վտանգի չենթարկելու համար պետք է առանձնապես զգուշությամբ կատարել խոտանների զոտումը : Խոտանների զոտումը կանոնավոր կատարելու համար պետք է յուրաքանչյուր կոլխոզում կերի խնդրի լուծման աշխատանքը դնել իր կարեռը բարձրության վրա : Լավ կերակրելուց վոչ միայն կըրարձրանա մեր անասունների կաթնատղությունն, այլ կոփուզի և նրա արտաքին տեսքը :

Այն հարցերին թե՝ ի՞նչ արդյունավետության առանձններ պետք է թողնել հոտի մեջ, վո՞ր կիթը սկսուի:

Ե Համարել նվազագույնը իբրև խոսան զտելու համար, ի՞նչպիսի մայրերից մատղաշներին պահել տոհմի համար և այլն, կարելի յէ պատասխանի միայն ամեն մի կոլյոզի նախրի հետ առանձնապես ծանրքանալուց հետո :

Մի քանի տեղերում վատ կիֆ և համարվում 2009 կելոգրամը խսկ ուրիշ տեղերում այդ նույն կեթին հանդիսանում և մեջակ կամ նույն խսկ՝ բարձր : Մերձքաղաքային տնտեսություններում յերբեմն անձեռնատույին համարվում այնպիսի անասուններ, վորոնք գյուղական սպայմաններում կարող են բոնի բեկորդիուսկաների տեղը : Նախիրներից խոտանները զտելու գործում վո՞չ մի գեղատում չի կարելի տալ . ամեն վոր կարող և ստանալ այն հենց կոլյոզում, տեղական սպայմանների կապակցությամբ :

Խոտանման յենթարկված յերիտասարդ վորձ կենդանիները կրտվում են և կամ մյուս խոտանածների հետ բարձր (գերացվում) իբրև մսացու, կամ պահպում են իբրև յեղնացու (բանուժ) : Բատման յենթակա կենդանիները հանձնվում են միս մթերող կազմակերպություններին, թեև բառումը կարելի յէ կազմակերպել և կոլյոզի մեջ, յերբ այդ նպատակահարմար կուսակի կոլյոզի համար :

Մատղաշների ներկոլյոզային կրնորակտացիա : Ներկոլյոզային կոնտրակտացիա ասելով պետք ե հասկանալ անասունների քանակն ավելացնելու յիշանակը ներքին հնարքավորությունների հաշվին :

Ներկոլյոզային կոնտրակտացիան կայտանում և նբաժեջ, վոր կոլյոզի վարչությունը վորոշ սպայմաններով կոնտրակտ ե կապում իր անդամների հետ, հանրայ-

նացված կովերից սուացված մատղաչ անասունների վերաբերմամբ :

Կոլյոզի վարչության ու կոլյոզի անդամի միջև կնքված սպայմանագրի կամ սպայմանի համաձայն, վերջինս պարտավորվում է մեծացնել իր մատղաշ հորթը մինչև 1 տարի և ամուսիան հասակը, կամ ավելի, նայելով ինչպես և կնքված սպայմանագրիը, և հետո հանձննել կոլյոզին : Կոլյոզի վարչությունն իր կողմէց ըստ սպայմանագրի պարտավորվում և վճարով տալ վորոշ քանակությամբ ուժեղ կերեր, ամսվա սեղոնին ընդունել իր համարի մեջ և այլն : Պայմանաժամը լրացնելուց հետո անասունը հանձնվում և կոլյոզին, արժեքն ավելացնելով կոլյոզի տվյալ անդամի փայտավճարի վրա : Արժեքի գումարը նշանակվում և սպայմանագրի մեջ սպայմանն ստորագրելիս :

Մատղաշ անասունների ներքին կոնտրակտացիան կնպաստի ավելի ձեռնտու սպայմաններով մեծացնել կոլյոզի նախակը :

Հիմնական մոմենտներն այդ կոնտրակտացիայի ժամանակ . հետեւյալներն են՝

1. Կենդանու հասակը կոլյոզին հանձնելու միջոցն ալետք և լինի 1 տարի և ամսուսկանից վո՞չ սպակաս (կարող ե լինել և մեծ-2 տ.) :

2. Կոլյոզում այդ կոնտրակտացիայի համար ոլելոք և հիմնել ուժեղ կերերի առանձին ֆոնդ : Ուժեղ կերերը կոլյոզը տալիս և վորոշ նորմայով (մոտավորապես 1 տարին $\frac{1}{2}$ - 2 ցենտներ, և տարին $1\frac{1}{2}$ - $2\frac{1}{2}$ ցենտներ ամեն մի դիմին) : Նորմաները բաց են թողնվում ինքնարժեքով և բաժիններով :

3. Պայմանագրի մեջ նշանակվում և անասունի մո-

տավոր կենդանի քաշը կոլխողին հանձնելու մոմենտին։
1 տար. 6 ամսական կենդանու քաշը յեթե տեղական ա-
նասունների համար սահմանված միջին քաշից պակաս
լինի, գեղջ ե արվում գնից։ Պահանջվում է նույնպես,
վոր մինչ կոլխողի հանձնելը բեյեկող յերինջը ծածկ-
ված լինի կոլխողի ցուլով։

4. Անման շրջանում պետք է ստուգատես կատարել
մատղաշ անասունների կերպարման ու խնամքի նկատ-
մամբ, վորի ժամանակ մասնադեռների ողնությամբ նը-
շանակվում են պահելու և ինտենսիվ մեջ նկատված թե-
րություններն ու արվում են համապատասխան խոր-
հուրդներ։

5. Մատղաշ անասունին կոնտրակտացիայի պետք է
յենթարկել հենց ծնված առաջին որերից։

Մատղաշ անասունների փոխանակումն կոլխոզի և
քաղաքի ու զյուղի անհատների միջև։ Կոլխոզներին
լավագույն մատղաշ անասուններ մատակարարելը շատ
լուրջ ու կարևոր խնդիր է։ Գետք է աշխատել, վորպես-
դի կոլխոզների նախիրների մեծաշումը կատարի մեծ
մասամբ կաթնառատ կովերից սերված լավագույն
մատղաշ անասունների հաշվին։

Գյուղական վայըերում ծնված վոչ բոլոր հորթերն
են պահվում մեծացնելու համար։ Շատ անգամ նրանցից
ամենալավերը փչանում են հենց նրա համար, վոր մատ-
ղաների փոխանակումը անտեսությունների մեջ դեռ
չի կանոնավորված։

Այստեղ չիչ գեր չի խաղացել իր ժամանակին և
կուլակը։ Դասակարգային կովի սրման հետեանքով
կուլակն վոչ միյան ինքն և կրծառում իր անասունների
ընդհանուր քանակն, այլ և տանում և չարանենդ աղի-

տացիս դյուլացիության ըրջանում, աշխատելով ամեն
կերպ աղացուցել, վոր մատղաշ անասուններին դանակի
տակ պետք է դնել։ Խանգարել կենդանաբության
պրոբլեմի լուծումը կուլակության խնդիրներից մեկն է։

Քաղաքների ու ավանների նախիրների մեջ ես
կան շատ կաթնառատ կովեր և մեծ մասամբ նրանց հոր-
թերն ել մորթումով են։

Իսթինառատ կովերի մատղաշ սերունդը ուահելու։
Համար անհրաժեշտ է կարգավորել մատղաների փո-
խանակումը կոլխոզների ու անհատականների միջև։
Այս գեղքում պայմանավորման համաձայն անհատա-
կանից վերցվում է այն հորթը, վորի մոր արժանիքներն
ակնհայտ են, սակայն վորին չի ուզում նա պահել։
Փոխարենը արվում և նրան կոլխոզի համար անպետք
նախիրից զաված վորեկ ցուլիկ կամ հորթ, կամ թե չի
վճարվում և արժեքը։ Նախապես, մինչև կովերի մաս-
սայիկան ծնելը, պետք է պարզել, թե՝ լավ կովեր ունե-
ցող տնտեսություններից վորո՞նք չեն ուզում հորթերը
պահել սերնդի համար և նրանց հետ համաձայնության
գալ այդ հորթերը կոլխոզին հանձնելու պայմանների
վերաբերմամբ։

Ամենից լավն է քաղաքի կովատերերի հետ կազ
հաստատել շրջկովազմիության միջոցով։ Շրջկովազ-
միությունները հայտնաբերում են կաթնառատ կովե-
րին ու նրանց այն տերերին, վորո՞նք կամենում են իրենց
մատղաշ անասուններին հանձնել կոլխոզներին և ըստ
ամֆ կաղթում կայուն սլամ մասնագրելու այդ մատ-
ղաշ անասունները կոլխոզների միջև։ Առանձնապես ու-
շագրաւթյուն պետք է դարձնել հորթերը տնտեսութ-
յուններից վերցնելու վրա։ Վերջված հորթերը կու-

խողների մեջ մասնաշրման կայուն պլան անհրաժեշտ է կաղմել նրա համար, վորպեսզի իր ժամանակին իւրագեկ դարձվեն կոլխոզները նախապատրաստվելու ժամղաշ անասուններն ընդունելու և կարեռ միջոցներ հատկացնելու փողով կամ զաված խոտան հորթերով:

Երջկոլխոզմիությունների համար այս ասպարից զում գոբծունեյության լայն հօրիզոն ե բացվում: Փոխանակող մատղաշ անասունների վորակը լավացնելու նպատակով լավ ե ձեռք բերել պլանով նախատեսված ցեղին պատկանող տոհմիկ ցուլեր: Այն ժամանակ կըստացվի ծագումով հայտնի կիսատոհմիկ մատղաշ սերունդ:

Մեր Միության մեջ շատ կաթնառատ կովեր կան քաղաքներում ու ավաններում և անասնապահության պարապող յուրաքանչյուր գործնական աշխատավորի պարքը պետք ե լինի լիազես ոգտագործել այդ կաթնառատ մասսիվ՝ կոլխոզային նախիրը բարելավելու համար:

Այս միջոցառումն առանձնապես միշտ կարող են իրագործել այն կոլխոզները, վորոք գտնվում են քաղաքներին ու խիտ բնակչություն ունեցող ավաններին մոտենի:

Բեղմնավորման կայանի և արհեստական բեղմնավորման կազմակերպումը: Բեղմնակայանի կազմակերպումը կայանում է նրանում, վոր կոլխոզն իր նախիրից ջոկում և մեկ կամ յերկու պլանային ցեղի արտադրող ցուլեր և ոգտագործում նրանց շրջակա ազգարնակության կովերի համար: Նման ձեռնարկումը արտադրական կապ ե հաստատում շրջակա տնտեսությունների հետ և կոլխոզը դուռը խնիկական ազդեցություն է

գործում շրջանի անասունների բարելավման աշխատանքներում:

Բեղմնավորման կայան կազմակերպելիս պետք է հետևել, վորպեսզի բերված կովերի միջոցով կոլխոզի նախիր մեջ հիվանդություն չընկի: Այս յերեսույթի առաջն առնելու համար կոլխոզը պետք է պահանջ զնի, վորպեսզի բեղմնավորման համար կոլխոզ բերվող կովերը նախորոք յենթարկվեն անասնաբուժական քննության և միայն անասնաբուժական անձնակազմի վորոշմամբ թույլ տան նրանց գուշավորումը:

Բեղմնավորման կայանի աշխատանքները կարող ե տեղի ունենալ մի սեզոնում միայն կամ շարունակվել անընդհատ ամբողջ տարին: Սովորաբար զուղավորման համար հարկավոր ե մի տասնձին տեղ (10×10 մետր) ամեն կողմից շրջապատված ցանկապատով: Զուղավորումը պիտի կատարվի վորոշված ժամերում՝ առավոտ և յերեկոյան: Ամենից լավն ե դրա համար հատկացնել առավոտյան ժամերը: Զուղավորման քանակին արտադրողի վերաբերմանը չի կարելի թույլ տալ որպական 1-2 անգամից ավելի: Հակառակ գեպքում ցուլերն ուժառապա կլինեն ու կանակեաքանան շատ կարճ ժամանակում ընթացքում: Մինչեւ ամեն միջոց պետք է ձեռք առնել, վորպեսզի արտագործներն երկար ժամանակ պահպանեն սեղունդ տալու իրենց ունակությունը: Դրա համար հանձնարկում և հնարավորություն տալ ցուլերին ամեն որ ման գալու պատսպարժած տեղում, կամ որակոն 3-4 ժամ ոգտագործել նրանց տընտեսության թեթև աշխատանքների համար (խոտ, ջուր և յալն կրել):

Արտադրող ցուլերին լծելու համար կարում են

Հատուեկ խամուտ շատ պարզ կաղմով, իսկ մհացած սարքը չի փոխվում:

Հետազոտությամբ ապացուցված է, որ կանոնավոր գրոսանքով ու թեթև աշխատանքի միջոցով կարելի յե ցուլերի ծառայության ժամկետն յերկարացնել յերկու անգամ, այսինքն մինչեւ 10-12 տարին:

Յուրաքանչյուր գուրգավորման ժամանակ կոմիտիքը պետք է տալ անդորրագիր, զորի մեջնչընդում են՝ ցուլի անունը, հասակը, ցեղը, գույնը, ծագումն և թե՛ս ուժն և պատկանում: Բացի այս նշանակվում են՝ կոմիտիքը, կոմիտի անունը, գույնը, հասակը, ցեղն ու ծագումը նրա, առաջին, յերկրորդ և յերրորդ գուրգավորման ժամանակը, իսկ վերջը տառերով պետք է ցույց տալ այն գումարը, վոր վերցված է զուգավորման համար: Վերցվող վճարի չափը վորոշում և կոմիտիքի վարչությունն ըստ տեղական պարմանների: Այդպիսի անդորրագիրը չի հարող ծառայել վորպես տոհմային փաստաթուղթ, վկայական կոմիտիք համար. նա միայն հաստատում է, վոր զուգավորումը կատարել և կուտադիր ցուլի հետ:

Ծնելուց հետո անդորրագիրը ներկայացվում է կոյիքա՝ նշանակելու համար բեղմնաւորման կայտնի աշխատանքի արդյունքները և տիրոջը արվում է հօրթի համար վկայական (նրա ծառման): Սերնդի ցույցուկապը ըստ անհրաժեշտ է վոր չի միայն նրա համար, վորին անհարությունը անհրաժեշտ է վոր չի միայն նրա համար, այլ նաև ստուգելու համար արտազրող ցուլերի աշխատանքը (յուրաքանչյուր ցուլից քանի ստեղծ կոմիտիք և մնում): Կոլխոզում, բեղմնաւորման չի կատարվում:

Վորման կայանում պետք է սլահել զուղավորության կովերի տեղեկանքների դիրք:

Անդորրագիրի և գրքերի ձեւը սովորաբար վորոշում էն ըրջանային մարթինները:

Կայանի աշխատանքներն ոկտիելու մասին անհրաժեշտ է լայն կերպով հայտաբարել ըրջակա բոլոր բնակչությանը:

Մոտ ժամանակներում կոլխոզներում բեղմնակայաններ հիմնելը կապատի կովերի ստեղմության վեմ տարին պայքարին: Կովերի ստեղծ մնալն ինչպես հայտնի յե, աշտին վնասներ և տակն մեր անահառապահությանը:

Մեր Միության հարավային մի քանի շրջաններում 1930 թվից սկսեցին զարգացնել արհեստական բեղմնավորման կայանները կոլխոզներում: Արհեստական բեղմնավորումը մտցվում է այն նպատակով, վոր արտադրող ցուլերի սերմը կարելավույն չափ չափ ոգտագործելու միջոցով ստացվի մասսայական բարեկաված մատերիալ: Առաջմ արհեստական բեղմնավորումն հիշված շաշմաններում կիրառվում և զիմանցորապես մսատու անասնաբուծության մեջ: Ինչպես հայտնի յե մսատվությունը ներկայիս բարեկավում և ստուցում է արտասահմանից բերված չորրորդն և չորրեֆորդ ցեղից ցուլերի ոգտագործման միջոցով: Յուրաքանչյուր ցուլի համար ստիպված ենք մենք վճարել վորկի վալցուայով, հետեւապես այս ձեռնարկումը չափազանց թանգ է: Արհեստական բեղմնավորումն հնարավորություն և տալիս 4-7 անգամ պակասեցնել թանգարժեք ցուլերի ներմուծումը, վորովհետեւ արհեստական բեղմնավորման կայանում մի ցուլը կարող է բեղմնավորել

200-400 կով, մինչդեռ բնական պայմաններում միջին քառով 40-60 կովի:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ

| Ա.Ա. ըստ կազմի առաջնական գույքի | Ո-Շ և պահան- նական կով | Տ-Շ ընդունակա- կով | Կով անձնակա- նակության մասին |
|------------------------------------|---------------------------|-----------------------|---------------------------------|
| Հ Ա Ա Ա Ա | Գ Ա Ա Ա Ա | Ց Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա |
| I | II | III | Չ Ա Ա Ա Ա |
| Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա |
| Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա | Չ Ա Ա Ա Ա |

Արհեստական բեղմնավորման կայանների կազմակերպումն համեմատաբար բարդ ձեռնարկում է: Կայանը կանոնավոր կարող է աշխատել միայն, յերբ կահատուկ անձնակազմ (անասնաբուծ-տեխնիկ), վոր լսած մինի մասնագիտական կուրսերում, կամ անասնաբուժ գոտութեանի) և բացի այդ կահատուտական շենք արհեստական բեղմնավորման գործիքներով ու սարքով: Կայանի սարքավորումն առասարակ նստում է 1200-1500 ոռութիւն: Արհեստական բեղմնավորման կայան բանալու համար անհրաժեշտ է կապվել շրջանային կազմակերպությունների հետ:

Մակերպությունների հետ և նրանց միջնորդ կատարել կազմակերպությունները*):

Կոնկորս մատղաշ անառությունի անեցման համար կոլխոզներում: Կոնկորսները (մրցումները) անասնապահության ասպարիզում ահազին դեր են խաղում կաթնասու անասնապահության զարգացման գործում կոլխոզներում: Երանք խթան են հանդիսանում այդ ճյուղի ընդարձակման համար:

Կոնկորսները մեր խորհրդային պայմաններում հանդիսանում են սոցիալիստական կառուցվածքի, կոլխոզային մասսաների սուեդագործ ենթուգիազմի սուուգատես, վոր արտահայուղում և կոլեկտիվ անասնապահությունը կանոնավոր հիմքերի վրա զնելու գործում և շրջանի կամ ամբողջ մարզի կոլխոզների անասնապահական աշխատանքի նորման կազմակերպան մէջ: Մեր պայմաններում կոնկորսների նպատակը հանդիսանում է կոլխոզային անասնապահության սոցիալիստական վերակառուցման մեթոդների պրագտանդան, ստուգատես սոցիալիստական մրցման և հարվածային արդյունքների ու լայն ծանոթացները շրջակա ազգաբնակությանը կոլխոզների նվազութեանը անասնապահության ասպարիզում, նույնու և լուգագույն կոլխոզների փորձառության փոխադրումը շրջանի բոլոր կոլխոզները:

Կոնկորսները պետք ե ամենաակների ու հովովիչ

*) Վերջին ժամանակներս արհեստական բեղմնավորման այանները կոլխոզներում կազմակերպվում են մերձակոր մասակցությամբ «Սկսառող» ակց. ընկերության, վորը խոշոր աշխատանք է տանում կովերի արհեստական բեղմնավորման գործում իր մասակցությունում, պիտակրագետ չյուռ. Կովկասում, երքին ու Միջն Պովությանում և այլն:

կերպով ցույց տան կողեկտիվ տնտեսավարության առավելություններն անհատականների հանդեպ :

Ներկայիս, յերբ գրեթե բոլոր կոլխոզները մասնակցում են սոցիալիստական մրցմանն ու կատարում կուսակցության ու կառավարության հարվածային առաջադրանքները, կոնկուրսներն ստանում են առանձին լուրջ նշանակություն : Նրանք ամենալավ միջոցն են տեսնում մեր կոլխոզների անասնապահության դաշտացման մեջ սոցիալիստական մեթոդների արդյունքները հանրագումարի բերելու համար : Այդ մեթոդների շուրջը կոնկուրսների ժամանակ ստեղծվում է լայն հաստարակոց կարծիք շրջապատող ազգաբնակության կողմից :

Ներկայիս անասումների բազմացնելը մեր կոլխոզներում չափազանց մեծ տնտեսական նշանակություն և ստանում : Մենք մոտակա տարիներում պետք են մեծացնենք կոլխոզային հոտերի ու նախելիների ընդարձակումն այն հաշվով, վոր մեկ հեկտար ցանքսին ընկող անասունների քանակն ավելացնենք յերկու և յերեք մոնղամ :

Կազմակերպելով մատղաշ անասունների կոնկուրսային բուժումն կոլխոզի ներսում, մենք պետք են բարձրացնենք կոլխոզնիկի դիտելիքները մատղաշ անասուններին խնամելու, պահելու, կերակրելու վերաբերմամբ, տանք կոլխոզնիկին գործնական փորձառություն այդ ասպարիզում : Բացի այս, կոնկուրսը նպաստում են մատղաշ անասունները մեծացնելու աշխատանքների լավ կազմակերպմանը :

Կոլխոզների պրակտիկայում հորթերին խնամում են կամ առանձին աշխատավորները պետք են մեկը :

20 կամ ավելի դլուխների բեռնվածությամբ, կամ կթողները յերկու աշխատանքի համատեղությամբ կթելու հետ) — 2-3 հորթի բեռնավորմամբ :

Մրցանակաբաշխության կամ կոնկուրսն անցկացնելու համար հատկապես այս նպատակով ջոկված հորթերի խմբակին ամբացնում են մեկ կամ յերկու աշխատավոր : Մրցումը կատարվում է այդ խմբակների միջեւ :

Հորթերի խմբերը կազմվում են ըստ կարելվույն հասակակեց հորթերից և հավասար թվով վորձ և եղ հորթերից : Կոնկուրսը կերառելու սկզբին անհրաժեշտ է հորթերին կերակրելու և խնամելու մասին դասախոսություն կարդալ կոնկուրսին մասնակցող աշխատավորների համար, կամ կազմակերպել դրույց նույն նյութի շուրջը : Կոնկուրսի ամբողջ ընթացքում ցանկալի յերբեմն-յերբեմն բարձրածայն ընթերցումներ կազմակերպել մատղաշ անասունները մեծացնելու մասին :

Կոնկուրսի ժամանակամիջոցը կարող է լինել զանազան : Ամենից լավն է կաթնակեր հորթերի խմբերի համար սահմանել կարճ ժամանակամիջոց — 2-3 ամիս : Մեծհասակների համար պետք են սահմանել ավելի յերկար ժամանակ (4-6 ամիս) : Այդպիսի ժամկետներ պետք են սահմանել նրա համար, վոր սկզբնական շրջանում ավելի արագ են մեծանում կենդանին, քան իր մեծ հասակում :

Կոնկուրսն անցկացնելիս սովորաբար մի հասակի մատղաշներին կերակրելու համար վորոշ նորմա յես սահմանվում և աշխատավորները պետք են պահեն այդ նորման, առանձնապես ուշադրություն դարձնելով կե-

բի նախապատրաստման վրա Հորթերին տալուց առաջ և խիստ պահպանելով կերակրելու կարգը ժամերով։ Հորթերն ամեն որ պիտի զբոնեն ու պահվեն մաքուր։ Հորթնոցը կոնկուրսից առաջ պետք եւ ախտահանվի ու մաքրվի, և միշտ մաքուր պահվի։ Հորթնոցը պետք եւ սպիտակացնել կրով։

Հորթերը պահելու, կերակրելու ու խնամելու կանոնները մշակում եւ վարչությունը ադրոնոմի և անասնաբուժի հետ միասին։

Կոնկուրսն անցկացնելու համար սովորաբար ընտրըլում է մի հանձնաժողով՝ կոլխոզի վարչության ներկայացուցչից, անասարուծից և մի կոլխոզների կայտ հանձնաժողովի խնդիրների մեջ են մտնում ստուգատեսի, կատարումը, կոնկուրսի ընթացքի ստուգումն և կոնկուրսի հանրագումարների հաշվառումը։ Իբրև եքսպերտներ, անհրաժեշտ եւ հրավիրել ադրոնոմին և անասնաբուժին։

Անասունների պարբերական ստուգատեսը կատարվում է զանազան ժամանակամիջոցներում՝ կաթնակեր հորթերի կոնկուրսի ժամանակ՝ ամեն շաբաթ, իսկ մեծահասակներին՝ յերկու շաբաթը մի անգամ։ Հորթի միջին աճը վորոշելու համար, կշռում են։ Կոնկուրսի վերջին, այդ կշռումները հանրագումարվում են և կոնկուրսին մտնակցող հորթերի ամեն մի խմբի համար հաշվում է կենդանի քաշի միջին աճը ամեն որվառ ամեն մի գլխի համար։

Կոնկուրսի ընթացքի ցուցանիշներ հանդիսանում են՝

1) Մի որվա աճը (հավելումը) ամբողջ խմբի ու մի գլխի։

- 2) Խժբի գիրությունը (պարարտությունը) բարեռով։
- 3) Մարմնի մաքրությունը։
- 4) Գոմի մաքրությունը։
- 5) Մսուրի և մյուս ինվենտարի մաքրությունը։
- 6) Առողջական գրությունը։

Բոլոր այս ցուցանիշները կախվում են տախտակի վրա կոյխովի վարչատում կամ Հորթնոցում։ Հանձնաժողովի ամեն մի ստուգատեսից հետո ցուցանիշները հայտարարվում են։

Կոնկուրսի ընթացքում կատարվում ե տրված կերի ցուցակագրում, ըստ խմբերի, կամ ըստ զյուինների։

Այդպիսի ցուցակագրումներն ովհում են (կոնկուրսի ավելի ևս խորը մշակման դեպքում) նաև նոր լրացուցիչ, մի ուրիշ ցուցանիշ ևս հանելու՝ այն եւ, թե՛ ի՞նչքան կերի միավոր և ծախտած մի կիրողրամ կենդանի քաշ ավելացնելու համար։

Կոնկուրսը նպաստում է աշխատանքի դիսցիլինայի ավելանալուն աշխատավորների մեջ ու սովորեցնում նրանց, Հորթերին կերակրելու կարգ-կանոնը ճշգրտերին կատարելուն։

Կոնկուրսի վերջին հանձնաժողովը սովորաբար վորշում է հանում, վորի մեջ նշանակում ե տուանձնապես աչքի ընկած խմբերին ու նրանց խնամող կոլխոզներին։

Այսանձին աշխատավորների կոնկուրս կազմակերպելիս սահմանվում են պրեմիաներ հորթերի լրավագույն խմբերի համար։

Պրեմիաները սահմանվում են դրամական կամ նյու-

թիրով, իսկ յերբեմն ել վորեւ և քակուրսիայում մի
տեղ հատկացնելու ձեւով:

Կոնկուրսների կազմակերպումը մատղաշ անասուն-
ներին մեծացնելու գործում հանդիսանում է վորակն մի
միջոց, վոր նպաստում և առանձին աշխատավորների
միջն տեղի ունեցող սոցիալիստական մրցումն ուղիղ
հիմքերի վրա դրվելուն:

Մրցումն աշխատավորների միջև կովերին կերա-
կրելու գործում: Խոչոր անասունանուցներում անասուն-
ների կերակրումը կատարում և աշխատավորների վո-
րոշ խմբակ, վորոնք կոչվում են կերակրողներ: Կերա-
կրողներ լինում են սովորաբար խոչոր նախիրների հա-
մար, ինչպես կաթնատու, այնպես ել մսատու: Ինկատի
ունենալով, վոր կերակրելու աշխատանքի մեջ առանձ-
նապես կարեվոր նշանակություն ունի կերն իր ժա-
մանակին տալին ու նրա վորոշ ձեւվով նախապատրաս-
տելը, մրցման մեջ պետք ե ընդգծել այդ մոմենտնե-
րը: Բացի այդ կարելի յե մշակել նորմալ բեռնավո-
րումն մի աշխատավորի համար:

Սովորաբար կերակրողների մեջ բաժանվում և բո-
լոր անասունը: Յուրաքանչյուր կերակրող ստանում և
անասունների վորոշ խումբ:

Մրցման ընթացքում յուրաքանչյուր կերակրողի
իրավունք և արվում մտցնելու այս կամ այն բարելա-
վումը, վոր կարող և պարզացնել կերի բաժանման
ու եփնիկան ու նախապատրաստումը անասուններին տա-
լուց առաջ:

Այն դեպքերում, յերբ կերակրողների գիտական
մակարդակը բավական բարձր է, նրանց կարելի յե
հանձնել անասունների կերակրման նորմաները կաղ-

անելը, կենդանաբուծի ընդհանուր զեկավարության
տակ:

Այս գեպքում անասունների կերակրման ասպարի-
զում հայտաբերվում է կերակրողների նախաձեռնու-
թյունը: Ամեն մեկի գործնական դիմադրություններն ու-
տապահարկները կարող են լիազես ոգտագործվել: Կոլ-
խողներում քիչ չեն այնպիսի աշխատավորներ, վորոնք
աշխատանքի մեծ ստաժ ունեն և կարող են բարելա-
վումներ մտցնել:

Մրցման ցուցանիշներ հանդիսանում են՝ կաթնա-
տու նախրի կթի ավելացումն և մսատու անասունների
կենդանի քաշի աճումը:

Մսատու անասուններին բուելու ժամանակ կարելի
յէ կերակրողներին թույլ տալ փոխել կերակրման ընդ-
հանուր կարգը որվա ընթացքում:

Յուրաքանչյուր աշխատավորի վրա ամրացված
անասունների չափը կարող է տարբեր լինել, սակայն
վո՞չ պակաս կոլխոզի վարչության հաստատած միջին
նորմայից: Մրցումից առաջ կերակրողներն ստորա-
գրում են փոխադարձ պարտավորագրեր, վորտեղ նշա-
նակվում են մրցման հիմնական խնդիրներն ու նրանց
լուծման ուղիները:

ԿԱԹՆԱՍՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԽՆԱՄՑԵԼՈՒ
ՈՒ ՊԱՀԵԼՈՒ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ:

Նախ քան կոնկուրսների կիրառելը կոլխոզներում,
անհրաժեշտ և աշխատավորների խմբակներին ծանո-
թացնել անասուններին խնամելու հիմնական ձեվերի
(պլիոմեների) հետ, ինչպես և կոնկուրսները կիրառող

Հանձնաժողովներ կազմել կոլխոզի վարչության ներս
կայացուցչից, ազգոնոմիական անձնակազմից, կոլխո-
զի անդամներից և այլն:

Հանձնաժողովի խնդիրների մեջ մտնում են կոն-
կուրսը կիրառելու կանոնների մշակումը, ոտուգատես-
ներ կատարելը, ստացված արդյունքների համապատ-
ասախան պիտի անակելը:

Կոնկուրսի գնահատման հիմնական մեթոդը բա-
րերի (թվանշանների) մեթոդն է, ստացված ցուցա-
նիշների համապատասխան: Որիսկ՝ անասունների ժաք-
բելը գնահատում են՝ 2—վաս, 3—բավարար, 4— լավ:
Սա ամենապարզ մեթոդն է, վորոն ամենաընդարձակ
ժամանակումն է գտնել:

Կոնկուրս լավագույն կրի համար: Այս կոնկուրսի
սպասակը կայանում են նրանում, վոր կոլխոզի նախ-
արի կթելու լավ ձեվերի (պրիորների) միջոցով բարձ-
րացվի կովերի կիթը: Պետք է կթողներին ծանթաց-
նել կանոնավոր կթի հետ և պահանջել կիրառել այն
գործնականում: Կոնկուրսի ժամանակ անհրաժեշտ և
հետեւել կթի մաքրությանը, վորի համար յուրա-
քանչյուր 10—12 կթողի վրա նշանակում են առանձին
կթող, վորը կոչվում է ստուգով: Ստուգող-կթողը
պետք է գործնականից գիտենա կթելու հիմնական յե-
ղանակները:

Կթելուց հետո կրծում մնացած կաթը սովորաբար
հանդիսանում է վատ կթի ցուցանիշ (ի բացայալ այն
դեպքերի, յերբ կովը սովորություն ունի կաթը պա-
հելու—վեր քաշելու) հենց նա յել ծառայում է իրու-
ցուցանիշ կոնկուրսի ժամանակ: Ստուգող-կթողը
հիմնական կթողներից հետո ստուգում է բոլոր կո-

վերին: Կովերի խմբերն այնպես պետք է կազմել, վոր
մի խմբի մեջ ընկնեն միայն հետապնդիթ կովերն, իսկ
մյուսի մեջ միայն պնդակիթերը (դժվարակիթ): Բա-
